

**ԼՈՒԻԶԱ ԾԱՏՈՒՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ  
(ՆՈՈՒ-ՀԱՈՒ-Ի) ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը առևտրային գաղտնիքի շուրջ ծագող բոլոր հարաբերությունների համակարգում իրականում կարգավորում է միայն դրա նեղ սեզմենտը՝ գույքային հարաբերությունների հետ կապված նոու-հաուի շուրջ ծագող հարաբերությունները: Նման պրակտիկա է կիրառվում նաև մի շարք եվրոպական պետությունների կողմից: Այսպես, եվրոպական որոշ պետություններում առևտրային գաղտնիքի իրավական կարգավորումն իր զարգացումն է ստացել միայն անցյալ դարի 90-ական թվականների սկզբից: Բացառություն է կազմում Ֆրանսիան, որտեղ այս իրավական ինստիտուտն օրենսդրորեն ամրագրվել է դեռևս 1844 թվականից:

Նոու-հաու-ի՝ որպես առևտրային գաղտնիքի հատուկ տարատեսակի իրավական ռեժիմը բնորոշվում է հետևյալ կերպ. նոու-հաու-ն այն տեղեկատվությունն է, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն, իսկ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Նոու-հաու-ի իրավական ռեժիմի սահմանումը այն միակ դեպքն է, երբ տեղեկություններն ընկնում են բացարձակ գույքային իրավահարաբերությունների բնորոշման տակ և ձեռք են բերում հատուցմամբ օտարվելու պոտենցիալ հնարավորություն: Բոլոր բացարձակ գույքային իրավահարաբերությունների նման դրանք ևս պահանջում են անհատապես որոշվող (դիսկրետ) օբյեկտի առկայություն: Իսկ ի՞նչն է ծառայում որպես տեղեկատվության նույնականացման չափանիշ: Ակնհայտ է, որ առաջին հերթին դրանց ամրագրումը նյութական կրիչի վրա (փաստաթղթավորում): Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում ոչինչ չի ասվում առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության փաստաթղթավորման

պարտավորության մասին: Գտնում ենք, որ փաստաթղթավորումը արդարացված է միայն նոու-հաու-ի և ոչ թե առևտրային գաղտնիք կազմող բոլոր տեղեկությունների դեպքում: Վ. Ա. Դոգորցևը գրում է. «Այն պատկերացումը, որ արդյունաբերական գաղտնիքների ամրագրման ձևին չի կարող ներկայացվել ոչ մի պահանջ, սխալ է: Արտադրության գաղտնիքների պահպանության համար պետք է ունենալ տեղեկություններ, որոնք բավարար կլինեն դրա նույնականացման համար. այդ պատճառով դրանք պետք է ամրագրվեն գրավոր կամ նյութական կրիչի վրա, այլ օբյեկտիվ ձևով (օրինակ, էլեկտրոնային ձև, տեսագրություն, ձայնագրություն և այլն), որը մատչելի է երրորդ անձանց, իսկ բանավոր ձևն անընդունելի է»<sup>1</sup>:

Սակայն նոու-հաու-ի միայն ամրագրումը քաղաքացիական շրջանառության համար ակնհայտորեն բավարար չէ, քանի որ այն տվյալները, որոնք ունեն նույն բովանդակությունը, բայց միաժամանակ գտնվում են տարբեր կրիչների վրա, միևնույնն է, իրենցից ներկայացնում են նույն օբյեկտը: Հետևաբար տեղեկությունների նույնականացման մեջ գլխավոր դերը խաղում է դրա բովանդակությունը և ոչ թե տարածքային տեղակայությունը, ինչպես իրերի դեպքում: Տեղեկությունների շարադրման ձևը դրանց նույնականացման համար ևս նշանակություն չունի, չի կատարվում նաև դրանց հատուկ գրանցում՝ այն որոշակի անձանց անվամբ ձևակերպելու նպատակով: Արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ նոու-հաու-ի ռեժիմ ունեցող տեղեկությունների նույնականացման միակ եղանակը դրա ամրագրումն է նյութական կրիչի վրա և որոշակի բովանդակության առկայությունը:

Ելնելով վերը նշվածից՝ գտնում ենք, որ փաստաթղթավորումը նոու-հաու-ի իրավական ռեժիմի առաջացման համար հանդիսանում է պարտադիր ընթացակարգ: Պարտադիր է նաև գաղտնիության

www.lawinstitute.am

ապահովմանն ուղղված գործողությունների կատարումը: Միայն այսպիսի յուրահատուկ ձևով է ձեռք բերվում տեղեկությունների նույնականացման (դիսկրետության) հնարավորությունը: Միաժամանակ հնարավոր չէ շնկատել, որ նրան հատուկ է որոշակի, պայմանականորեն արտահայտված «ոչ օբյեկտիվության» մասը: Այսպես, արդյունաբերական սեփականության օբյեկտը՝ որպես ինքնուրույն և անկախ դիսկրետ միավոր, գոյություն ունի «օբյեկտիվորեն», անկախ իրավահարաբերության մասնակիցների կամքից, որի հաստատումն է հանդիսանում պետական մարմինների կողմից տրվող արտոնագիրը: Իրի «օբյեկտիվությունը» ևս կարող է հաստատվել զննման եղանակով, իսկ հեղինակային իրավունքի «օբյեկտը»՝ գեղարվեստական ձևի ստեղծման անհատական միջոցների և եղանակների վեր հանման ձևով: Իսկ ինչպե՞ս բացահայտել և ապացուցել նոու-հաուի ռեժիմում գտնվող տեղեկությունների առկայությունը, եթե ոչ հենց իրավահարաբերության սուբյեկտի կողմից կազմված, տվյալ տեղեկությունների գաղտնագրված փաստաթղթերի կիրառմամբ:

Նոու-հաու-ն պայմանագրով փոխանցելու դեպքում տեղեկությունների դիսկրետությունը «օբյեկտիվություն» է ձեռք բերում, քանի որ վերջիններս ամրագրվում են երկու կողմերի ստորագրած փաստաթղթում, այսինքն՝ իրավահարաբերության մասնակիցներից երկուսն էլ հաստատում են փոխանցվող տեղեկությունների բովանդակությունը: Եվրամիության խորհրդի՝ Եվրամիության որոշակի կատեգորիայի համաձայնությունների տեխնոլոգիաների փոխանցման մասին պայմանագրի 85(3) հոդվածի կիրառման մասին N240/96 կարգի 10-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ «նույնականացումը» նշանակում է, որ նոու-հաու-ի բովանդակությունը նկարագրված է կամ ամրագրված այնպես, որպեսզի հնարավոր լինի ստուգել, թե համապատասխանում է այն գաղտնիության և էականության չափանիշներին կամ բացառել լիցենզառուի ոչ պատշաճ սահմանափակումը իր սեփական տեխնոլոգիաների օգտագործման ժամանակ: Նոու-հաու-ն նույնականացման նպատակով կարող է ամրագրվել կամ լիցենզային պայմանագրում, կամ առանձին փաստաթղթում, կամ ցանկացած այլ պատշաճ ձևով, ամենատուր նոու-հաու-ի փոխանցման կամ ավելին՝ նման փոխանցումից հետո, պայմանով, որ անհրաժեշտության դեպքում

առանձին փաստաթղթին կամ ամրագրման այլ ձևին առնչվելու հնարավորություն լինի<sup>2</sup>:

Ավելի դժվար է նույնականացնել նոու-հաու-ն այն դեպքում, եթե դրան առնչվելու հնարավորությունն առաջացել է անօրինական կերպով, այսինքն՝ կողմերի միջև ծագել է ոչ թե պարտավորական իրավահարաբերություններ, այլ իրավահարաբերություններ բացարձակ իրավունքի խախտումից: Իրավախախտը պետք է ապացուցի, որ արժեքավոր տեղեկություններին առնչվելու հնարավորություն ստանալու պահին տնօրինողը դրանց գաղտնիության պահպանության համար անհրաժեշտ ոչ մի միջոց չի ձեռնարկել, իսկ տուժողը, ընդհակառակը, պետք է ապացուցի նման միջոցների առկայությունը և որպես ապացույց ներկայացնի փաստաթղթեր, որոնք կազմվել են հենց իր կողմից: Միաժամանակ բացառված չէ, որ վերջիններս պատրաստվել են արդեն վեճի ծագումից հետո: Հարց է առաջանում. իսկ այս դեպքում ինչպե՞ս պետք է գործի դատարանը և ու՞մ հավատա, կամ ո՞ր երրորդ անձը կարող է հաստատել նոու-հաու-ի ամրագրման փաստը:

Կարծում ենք, որ լիազոր պետական մարմնի բացակայության պարագայում այդ լիազորությունը կարող է իրականացնել նոտարը՝ նոու-հաու-ի վերաբերյալ տեղեկություն պարունակող փաստաթղթի վրա առկա իրավաբանական անձի՝ տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրության իսկության վավերացման միջոցով: Նման գործողությունը, համաձայն «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի<sup>3</sup> 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, իրականացնում է նոտարը:

Բացի նոու-հաու-ի դիսկրետության խնդրից՝ գոյություն ունի նաև դրա հետ սերտորեն կապված այդ օբյեկտի նկատմամբ քաղաքացիական իրավունքների պաշտպանության խնդիրը: Պաշտպանության եղանակը բացարձակ գույքային իրավունքների օբյեկտների դասակարգման համար հանդիսանում է կարևորագույն չափանիշ: Յուրաքանչյուր ինքնուրույն օբյեկտի հատուկ է իր պաշտպանության եղանակը, որն իր հերթին կախված է օբյեկտի դիսկրետության եղանակից: Այսպես, իրը ավանդապես նույնականացվում է տարածքային սահմանները որոշելու ճանապարհով, այդ պատճառով էլ գույքային (իրային) իրավունքների պաշտպանության եղանակները հանդիսա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նում են վիճակագրողները և նեգատոր հայցերը (ՀՀ քաղ. օր. 273-278 հոդվածներ):

Հեղինակային իրավունքի օբյեկտները նույնականացվում են գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների ձևով, անկախ նրանից, թե ինչպիսի նյութական կրիչների վրա են դրանք ամրագրված, հետևաբար խախտված հեղինակային իրավունքների վերականգնումը կայանում է ոչ թե ուրիշի ապօրինի տիրապետումից կրիչները ետ պահանջելու, այլ որոշակի գործողություններ կատարելն արգելելու մեջ, ինչպիսիք են վերարտադրությունը, տարածումը, վարձույթը, փոխատվությունն ու «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով<sup>4</sup> նախատեսված այլ ձևով օգտագործելը կամ ստեղծագործությունների և հնչյունագրերի կոնտրաֆակտ օրինակները քաղաքացիական շրջանառություն մտցնելու նպատակով պահպանելը կամ տնօրինելը: Արդեն պատրաստված կոնտրաֆակտ օրինակներն առգրավվում են և ենթակա են ոչնչացման: Դրանց փոխանցումը իրավատիրոջը իրականացվում է միայն նրա խնդրանքով: Արտոնագրատերն իրավունք ունի պահանջել նաև արգելել երրորդ անձանց կատարել այնպիսի գործողություններ, որոնք կապված են արտոնագրված գյուտը, օգտակար մոդելը, արդյունաբերական մոդելը «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված խախտմամբ օգտագործելը:

Իր ինքնուրույն պաշտպանության եղանակն ունի նաև նոու-հաու-ն, որի առանձնահատկությունները կանխորոշված են նրանով, որ դրան կատմամբ առաջնային իրավունքը կարող է ծագել միաժամանակ մի քանի անձանց մոտ: Իրերի և մտավոր գործունեության արդյունքների դեպքում նման իրավիճակը բացառված է: Ա.Ա. Պիլենկոն իր «Գյուտարարի իրավունքը» աշխատության մեջ, հղում կատարելով Օ. Գիերկին, գրում է. «Գյուտը պետք է պաշտպանված լինի երկու տեսանկյունից՝ 1. որպես անձի բյուրեղացում, քանի որ ոչ ոք իրավունք չունի խախտել այլ անձի անձնական կյանքի և նրա արդյունքների տաճարի խաղաղությունը, 2. որպես օգտակար աշխատանքի պտուղ, քանի որ ոչ ոքի թույլատրված չէ հարստանալ այլ անձի հաշվին»<sup>5</sup>: Թվում է, որ տվյալ դատողությունն արդարացի է բոլոր բացարձակ գույքային իրավունքների համար, որոնցից յուրաքանչյուրն ունի պայմանա-

կանորեն «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» անվանվող պահերը: «Օբյեկտիվությունը» կայանում է նրանում, որ տարբեր մարդիկ մեկը մյուսից անկախ չեն կարող ստեղծել միևնույն իրը, գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունը: Տարբեր մարդկանց կողմից ստեղծված միմյանցից անկախ նմանվող գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական մոդելի ստեղծումը հնարավոր է, սակայն առավելություն կատանա այնուամենայնիվ նրանցից միայն մեկը՝ մտավոր սեփականության գրանցման մարմին առաջինը հայտ ներկայացնողը («Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի<sup>6</sup> 4-րդ հոդված): Նոու-հաու-ի դեպքում «օբյեկտիվ» պահը չի գործում, քանի որ տարբեր մարդիկ կարող են միմյանցից անկախ սեփական ուժերով ստանալ միևնույն տեղեկատվությունը, հետևաբար ուրիշի հաշվին հարստացում տեղի չի ունենա: Մնում է միայն «սուբյեկտիվ» պահը, այսինքն՝ այն, որ «ոչ ոք իրավունք չունի խախտել այլ անձի անձնական կյանքի և նրա արդյունքների տաճարի խաղաղությունը»: Դիտարկելով գյուտարարի իրավունքը՝ Ա. Ա. Պիլենկոն գրում է, որ նա, ով ինքնուրույն հայտնագործել է մեքենա, իսկ այնուհետև արտադրել է այն, ակնհայտ է, որ չի միջամտել արտոնագրատիրոջ անձնական ոլորտին, սակայն միաժամանակ նրան պատժում է կոնտրաֆակցիայի համար: Նշանակում է՝ արտոնագրային իրավունքի պաշտպանությունը տարածվում է գյուտարարի անձնական ոլորտի սահմաններից դուրս այն իր երկաթե բռունցքն է դնում՝ հաշվի չառնելով ոչ այն, թե ինչու է արտահայտվել նրա անձը, ոչ էլ այն, թե ինչու է արտահայտվել ուրիշի անձնական ոլորտը»<sup>7</sup>: «Նոու- հաու-ն չի գործում այն անձանց նկատմամբ, որոնց այն հայտնի է դարձել իրավաչափորեն, - նշում է Վ. Ա. Դոգորցևը,-օրինակ, նրանց նկատմամբ, ովքեր իրավաչափորեն ստեղծել են նմանատիպ արդյունքը»<sup>8</sup>: Այնուհետև նույն հեղինակն իրավամբ նշում է, որ «ավելի ստույգ պահպանվում է ոչ թե նոու-հաու-ն՝ որպես այդպիսին, այլ դրա տիրոջ անձնական ոլորտի անձեռնմխելիությունը»<sup>9</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ, չնայած պաշտպանության եղանակների ակնհայտ տարբերություններին, իրական կյանքում տեղի է ունենում նոու-հաու-ի և մտավոր գործունեության արդյունքների որոշակի միախառնում: Այսպես՝ Ա.Պ. Մերգելը գրեթե նույնացնում է առևտրային գաղտնիքը և նո-

www.lawinstitute.am

ու-հաու-ն ու գրում է, որ առևտրային գաղտնիքը կարող է դիտարկվել որպես մտավոր սեփականության ինքնուրույն օբյեկտ, և այդ հաստատելու համար բերում է երեք փաստարկ.

առաջին՝ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունն իր էությանը ոչ նյութական է, ինչպես որ մտավոր սեփականության օբյեկտները,

երկրորդ՝ լինելով մարդու գործունեության արդյունք՝ լինի դա ստեղծում, փոխանցում, մշակում, պահպանում կամ էլ տեղեկատվության հավաքագրում, այն հնարավորինս համընկնում է մտավոր սեփականության այնպիսի հատկանիշին, ինչպիսին մտավոր գործունեության արդյունքն է,

երրորդ՝ տեղեկատվության նկատմամբ բացառիկ իրավունքը՝ այն երրորդ անձանց անհայտ լինելու պայմանով<sup>10</sup>:

Վ. Ա. Դոգորցևը, նոու-հաու-ի նկատմամբ իրավունքները դասելով բացառիկների շարքին, միաժամանակ կատարում է վերապահում, որ նոու-հաու-ն ոչ թե ավանդական բացառիկ իրավունքն է, որը ներկայացնում է ամբողջական բացարձակ իրավունքը, այլ էապես հատված, սահմանափակ, կարծեցյալ բացառիկ իրավունքը<sup>11</sup>:

Համամիտ ենք Ա.Պ. Մերգենի հետ այն հարցում, որ նոու-հաու-ն (և միայն դա, այլ ոչ առևտրային գաղտնիք հանդիսացող ամբողջ տեղեկատվությունը) հանդիսանում է մտավոր գործունեության արդյունք: Սակայն Վ. Ա. Դոգորցևը խոսում է դրա մասին որպես ոչ ամբողջական բացարձակ, կարծեցյալ բացառիկ իրավունք: Մեր կարծիքով խնդիրը կայանում է հետևյալում: Նոու-հաու-ն իրենից ներկայացնում է քաղաքացիական իրավունքի յուրահատուկ օբյեկտ. իր էությանը լինելով մտավոր աշխատանքի արդյունք՝ այն չունի պաշտպանության եղանակ, ինչը բնորոշ է մտավոր գործունեության մյուս օբյեկտներին: Լինելով բացարձակ և գույքային իրավահարաբերությունների օբյեկտ ու որպես հետևանք օժտված լինելով շրջանառու լինելու հատկանիշով՝ այն փոխառում է բացարձակ, սակայն անձնական ոչ գույքային իրավահարաբերությունների պաշտպանության եղանակները, որոնք ծագում են շրջանառության հատկանիշներով չօժտված օբյեկտի կապակցությամբ, այնպես, ինչպես ընդհանուր կանոնի համաձայն հանդիսանում է առևտրային գաղտնիքը: Ելնելով այն հանգամանքից, որ մենք քաղաքացիական իրավունքի օբյեկտները դասակարգում ենք ոչ թե ըստ իրենց

բնույթի, այլ ըստ պաշտպանության եղանակի, նոու-հաու-ն մեր կողմից չի կարող դիտարկվել որպես բացառիկ իրավունքի օբյեկտ: Հետևաբար, նոու-հաու-ն իրավունքի ինքնուրույն օբյեկտ է, առևտրային գաղտնիքի տարատեսակ:

Ըստ մեզ՝ նոու-հաու-ի պաշտպանությունը դուրս չի գալիս իրավաստիրոջ անձնական ոլորտից, քանի որ եթե անձն իր ուժերով ստեղծել է տեղեկատվությունը, ապա կարող է անարգել օգտագործել այն, նույնիսկ եթե այդ տեղեկատվության նկատմամբ այլ անձի կողմից սահմանվել է առևտրային գաղտնիքի ռեժիմ: Իրավունքի սուբյեկտը պաշտպանության իրավունք է ստանում միայն իր կողմից սահմանված գաղտնիքի ոլորտ չթույլատրված ներխուժման դեպքում, և բացի այդ՝ անձը, որն օգտագործել է առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը և հիմնավոր պատճառներ չի ունեցել տվյալ տեղեկատվության օգտագործումը դիտել անօրինական, այդ թվում առնչվելու հնարավորություն է ստացել պատահականության կամ սխալի հետևանքով, չի կարող ենթարկվել պատասխանատվության: Նշված անձի վրա առևտրային գաղտնիքը տնօրինողի կողմից կարող է դրվել միայն մեկ պարտականություն՝ ձեռնարկել տեղեկատվության գաղտնիության ապահովմանն ուղղված միջոցներ: «Այլ անձանց» առևտրային գաղտնիքը բարեխիղճ ձեռքբերողի կողմից օգտագործելու և տնօրինելու ազատությունը գաղտնիության պահպանման պայմաններում չի կարող սահմանափակվել, քանի որ բացակայում է անթույլատրելի ներխուժմամբ արտահայտված առաջին տնօրինողի անձնական իրավունքների խախտումը:

Առևտրային գաղտնիքը խախտողներին կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինների թվին պատկանում են այն անձինք, որոնք անմիջականորեն ոչ իրավաչափ ձևով ներխուժել են իրավաստիրոջ ոլորտը («սկզբնական» խախտողներ), իսկ երկրորդներին՝ որոնք միայն օգտագործել են ներխուժման արդյունքում ստացվածը («երկրորդական» խախտողներ): «Սկզբնական» և անբարեխիղճ «երկրորդական» խախտողները բոլոր դեպքերում պատասխանատվության են ենթարկվում, որն արտահայտվում է հետագա նոու-հաու-ի օգտագործման արգելմամբ և վնասների հատուցման պարտականությամբ: Բարեխիղճ «երկրորդական» օգտագործողը, ի տարբերություն նաև իրի նկատ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մամբ սեփականության իրավունքի բարեխիղճ ձեռքբերողի, ընդհանրապես երբեք և ոչնչում չի կարող սահմանափակվել:

- <sup>1</sup> Տե՛ս Դոզորцев В.А. “Понятие секрета промысла (“ноу-хау”). Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 248.
- <sup>2</sup> Տե՛ս Ֆիւ. ըստ Դոզորцев В.А. “Понятие секрета промысла (“ноу-хау”). Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 248.
- <sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 2(177), 10 հունվարի 2002:
- <sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 38(439), 12 հուլիսի 2006:
- <sup>5</sup> Տե՛ս Пиленко А.А. “Право изобретателя”.-М.: “Статут”. 2001. С. 617.
- <sup>6</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 73(372), 30 դեկտեմբերի 2004:
- <sup>7</sup> Տե՛ս Пиленко А.А. Право изобретателя.-М.: “Статут”. 2001. С. 607.
- <sup>8</sup> Տե՛ս Դոզորцев В.А. “Информация как объект исключительного права. Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 228.
- <sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 229:
- <sup>10</sup> Տե՛ս Сергеев А.П. “Право интеллектуальной собственности в РФ”.-М. ПБОЮЛ Гриженко Е.М., 2001, С. 679.
- <sup>11</sup> Տե՛ս Դոզորцев В.А. “Информация как объект исключительного права. Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 228.

### РЕЗЮМЕ

#### *Информация как объект абсолютных имущественных прав (правовой режим ноу-хау)*

В данной статье рассматриваются вопросы регулирования информации, как объекта абсолютных имущественных прав, специальной разновидности коммерческой тайны - «ноу-хау», в рамках которого отмечается, что установление правового режима «ноу-хау» - это единственный случай, когда информация подпадает под определение объекта абсолютных имущественных правоотношений и обретает способность к потенциальному возмездному отчуждению. Отмечено также, что единственным способом обособления информации в режиме «ноу-хау» одновременно выступают зафиксированность на материальном носителе, наличие определенного содержания и принятие всех мер по обеспечению конфиденциальности. Классификация объектов гражданских прав проводя по способам защиты, ноу-хау рассматривается как самостоятельный объект прав, разновидность коммерческой тайны.

### SUMMARY

#### *Legislative regulation of information as a civil rights object of know-how*

The article deals with the legislative regulation of the information as an absolute object for the absolutely property right referring to a special variety of commercial secret of know-how. The article states that the definition of legislative regime of the know-how is the only case when the information is defined under the absolutely legal property relations and obtains the potential opportunity to be sold by reimbursement. It is also noted, that the only way of the information identification having the know-how regime is its recording on physical disk- drives, the presence of certain meaning, as well as actions aimed at providing privacy. Classifying the objects of civil rights according to protection ways, know-how has been considered an independent object and one of the varieties of commercial secrets.